

րոցի վեցամեայ շրջանի ուսման ծրագիրը, որպէս կրօնական բարձր դպրոց, առաջարկել կառավարութեան ի վաւերացումն:

Ճավա կղզու հայերը

— Ճավա կղզիի Հայերու ընդհ. թիւն հազարի կհասնի, կգրեն նոյն տեղէն, Միայն Սուրապայա քաղաքին մէջ 300-ի չափ Հայ կայ եղեր: Վերջին ժամանակներս կղզիին Հայերուն մէջ տեսնուեր է ազգային զգացումին արթննալը: Հարուստ գործարանատէր Արգարեան փափաք յայտներ է իր միջոցներով Հայոց եկեղեցի մը շինել, եթէ գաղութն յանձն առնէ եկեղեցիին քահանան ապրեցնելու հոգը: Գաղութի Հայերուն ժողովն որոշեր է 4000 ոսկիի չափ գումար մը հանգանակել: Արդէն հաւաքուած է մօտ 2000 ոսկի:

Բիւզանդիոն



ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Թերզեան պատրիարքը հրաժարուած.

Հեռագրական գործակալութիւնները հրատարակել էին արդէն հայ-կաթոլիկների պատրիարք Թերզեանի հրաժարական տալու լուրը, այժմ «Բիւզանդիոնը» (յուլիս 8) գրում է.

«Հայ-հռովմէական հասարակութիւնը, որ գնահատելի եռանդով ու կորովով մղեց իր արգար պայքարը Թերզեանի հակազգային գործունէութեան հանդէպ, կը տանի յաղթանակը, ստիպելով Թերզեանն որ իր հրաժարականը դրկէ: Անօնք, որ կը թերահաւատէին թէ հասարակութիւնը չպիտի կրնայ գլուխ ելլել, անշուշտ ուրախութեամբ պիտի լսեն թէ Թերզեան՝ համոզուելով որ ազգին նոյն իսկ ամենէն թունդ պահպանողական տարրերն իր դէմ հանելէ ետք այլ ևս իր պաշտօնը չի կրնար շարունակել, Սպանիայէն, ուր «Հայաստանի Պատրիարք» տիտ-

դասը տալով ինքզինքին դրամ կը հանգանակէ, հրա-
ժարականը դրկած է Տեղապահ Ճամճեան Գերա-
պայծին։ Աւասիկ միակ խելացի գործը Թէրզեանին,
իր պատրիարքական պաշտօնավարութենէն ի վեր։
Անիկա համոզուեր է վերջապէս որ խոհեմութիւն է
քաշուիլ Աթոռէն և խնայել ինքզինքին՝ Պօլիս դար-
ձէն ետքը անգամ մը ևս ժողովրդային ցասումին
նշաւակ ըլլալէ։ Թերզեանի հրաժարականն առջի գի-
շեր հասաւ Պատրիարքարան։

Թերզեանի պարտութիւնը դնս մ'է բոլոր անոնց որ
բռնապետական սգւով տողորուած են և անհաշտ
աչքով կը նային երեսփոխանութեան ու աշխարհա-
կան տարրին գործակցութեան։

— Թերզեան Արքազանը տեղի տուեց ժողովրդի դըժ-
դոհութեանը, թէ թուրք նախարարի նկատողութեանը,
որ եղաւ պատրիարքական տեղապահի միջոցով, այդ միայն
իւր գաղտնիքն է։

Հայ-հռոմէական գործեր

Հայ-հռոմէականաց Պատրիարք Պօլիս հրաւիրուած է,
իր փոխանորդին կողմէ, Դատական նախարարութեան այն
ազդարարութեան վրայ թէ՛ Թէրզեան իր դրկած նամակ-
ներով և կոնդակներով կ'յուզէ հասարակութեան միտքն և
թէ, հողեւոր պարտականութեան մը համար Հռոմ գացող
Պատրիարք մը իրաւունք չունի նաեւ Բարիդ, Սպանիա,
Պրիւսէլ, ևլն. շրջագայելու ուրիշ նպատակներով։ Հայ-
հռոմէական շրջանակներու մէջ կ'սուի թէ Թէրզեան Պատ-
րիարք Պօլիս գալէ վերջ գաւառական առաջնորդները Պո-
լիս պիտի հրաւիրէ, նախ պակասեալ քանի մը առաջ-
նորդներու ընտրութեան և ապա կանոնադրի գործով
զբաղելու համար։ Թէրզեանի ըմբռնումին նայելով, պատ-
րաստուելիք այս կանոնադիրը, վարդապետանոցի մը ծրա-
գրէն տարբերութիւն չպիտի ունենայ, հետեւեալը աւե-
լորդ ջանք է Սինօդ գումարել։

Պօլիս հասաւ Հռոմի մէջ հրատարակուած պարբերա-

կան թերթի մը Ա. թիւը, ուղղեալ հայ հասմէական կղերին և բարեպաշտ ժողովրդեան: Այս թերթը կը տա տարբեր թերգեանի վերջին ուղղութիւնը և համբաւաւոր կոնդակին փառաբանութիւնը կընէ. Ինչպէս կղիտուի, ամեն շաբթու թերգեան մէկ մէկ նորութիւն կ'փորձէ իր ժողովրդեան զգացումները վերաւորելու համար: Իր այս օգիտ գումարելիք սինոդէն յառաջ գալիք արդիւնքը կըսելու համար հեռատես ըլլալու պէտք չկայ:

Ուր, երեկոյ (յունիս 24) հայ հասմէականաց Երեսփ. ժողովն Երամ Էֆ-ի ատենապետութեամբ իր վերջին նիստը գումարեց և կանոնադրին քանի մը յօդուածները վաւերացնելէ յետոյ վերջ տուաւ նիստերուն: Եթէ պէտք ըլլայ նիստ ընելու՝ պիտի հրաւիրուի: Իր մէջէն ընտրեց յանձնախումբ մը որ պիտի զբաղի, ընդհ. ժողովոյ իրաւասութեան հետ կապ ունեցող խնդիրներով, և գործադրելի միջոցներով՝ երբ թերգեան Պոլիս հասնի կամ նոր կընձաւորութիւն մը յարուցանել փորձէ: Այս նիստին մէջ Օրթաքէոյի և Բեշայի 50 հայ հասմէական կիներու և օրիորդներու ստորագրութեամբ հանրագրութիւն մը ներկայացաւ, որով կըողորեն թերգեանի ընթացքին դէմ և ընդհ. ժողովոյ վստահութիւն յայտնելով թերգեանին հրաժարումը կպահանջեն: Բրգնիքցիներն ալ նոյն մտօք գիժում ըրած էին գրաւորապէս: Զարմանալի է որ Պապին ներկայացուելիք գիրը դեռ չէ զրկուեր: Այս գիրը հասարակութեան վաղուց ունեցած ազգ. իրաւունքներուն բացատրութիւնն է և հռոմ պիտի կրնայ կշռել թերգեանի առարկութիւններուն իսկական արժէքը, սակայն եթէ ժամանակին չհասնի հռոմ, կամ թերգեանի մեկնելէն վերջ եթէ հասնի՝ ու է օգուտ և արդիւնք չի կրնար յառաջ բերել: Կըսուի թէ այս գիրը պիտի կրնայ զրկուիլ այս շաբթու:

Բիւզանդիոն